



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ  
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



«06» 07 2019թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000052

Ձեռնարկողը՝

«Ագրա» ՍՊԸ

Արագածոտնի մարզ,  
գ. Ագարակական

Գործունեությունը՝

Ագրակի փուֆերի երևակման փեղամասում 2019թ.  
ընթացքում կատարվելիք օգտակար հանածոյի  
երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների  
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական  
գնահատման հայտ

Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000052

« 06 » « 07 » 2019թ.

**Ագրակի տուֆերի երևակման տեղամասում 2019թ. ընթացքում կատարվելիք օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝ «Ագրա» ՍՊԸ  
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր /Գ կատեգորիա/  
Գտնվելու վայրը՝ Արագածոտնի մարզի Ագարակավան համայնք

Ագրակի տուֆերի երևակման տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Արագածոտնի մարզի Ագարակավան համայնքի վարչական տարածքում, բնակավայրից մոտ 1.0կմ հյուսիս-արևելք: Մոտակա բնակավայրերն են Կաքավաձոր, Կարմրաշեն, Պարտիզակ գյուղերը և Թալին քաղաքը:

Երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են երևակման 1.4հա մակերեսով տեղամասում, նպատակ ունենալով պարզաբանել տուֆերի որակական հատկանիշները, որոնք պետք է բավարարեն 9479-2011 և 4001-13 ԳՕՇ-երի տեխնիկական պահանջներին, դրանց պիտանելիությունը, որպես երեսապատման և արտադրության համար:

Հաշվի են առնված հետախուզվող տեղամասի երկրաբանական կառուցվածքը և երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները:

Արագածոտնի մարզի Ագրակի տուֆերի երևակման տեղամասի ծայրակետային կորդինատները WGS-84 կորդինատային համակարգով հետևյալն է.

- |                  |                 |                   |                 |
|------------------|-----------------|-------------------|-----------------|
| 1.X=4467384.7955 | Y=8421489.2049, | 2.X=4467432.7481  | Y=8421491.3374, |
| 3.X=4467463.5129 | Y=8421472.6418, | 4.X=4467491.8430  | Y=8421466.4445, |
| 5.X=4467472.2187 | Y=8421549.1481, | 6.X=4467523.2458  | Y=8421550.7928, |
| 7.X=4467519.0814 | Y=8421563.0990, | 8.X=4467495.9818  | Y=8421580.0254, |
| 9.X=4467433.5333 | Y=8421607.7792, | 10.X=4467366.6464 | Y=8421619.6586  |



Հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 10մ խորությամբ 3 հորատանցքերով, որոնց միջոցով կուսումնասիրվի և կնմուշարկվի տուֆերի հաստվածքը:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով նախատեսվում է յուրաքանչյուր հորատանցքից վերցնել մինչև 5.0 մ երկարությամբ հանուկային նմուշներ:

Յուրաքանչյուր հետախուզագծի վրա հորատանցքերի միջոցով օգտակար հաստվածքը կուսումնասիրվի ամբողջ հզորությամբ: Նախատեսվում է տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ, ինչպես նաև փորձնական բացահանքի անցում, նմուշարկում, ֆիզիկամեխանիկական լաբորատոր փորձարկումներ և ուսումնասիրություններ:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համածուլվածքային թագիկներով, 132մմ և 112մմ տրամագծերով, ՈւԿԲ 200 (ՉԻԼ131 Ա) տիպի ինքնագնաց հորատող հաստոցով: Նախատեսվում է հորատող հաստոցի 3 տեղակայում և տեղահանում:

Տուֆերի անցումների եզրագծման ուսումնասիրման և նմուշարկման համար նախագծով նախատեսվում է անցնել 2 մաքրվածք՝ յուրաքանչյուրը 40մ<sup>3</sup> ծավալով, ընդհամենը՝ 80մ<sup>3</sup>: Այդ աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով և ձեռքով առանց պայթուցիկ նյութերի կիրառման:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը, մաքրվածքները, բնական մերկացումները և փորձնական հանույթի բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով:

Տուֆերի լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում՝ 300մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով, որից 180մ<sup>3</sup> թարմ չհողմնահարված տուֆեր են, իսկ 120մ<sup>3</sup> փուխր և հողմնահարված ապարներ:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 6 հանուկային նմուշ մինչև 5.0 մ երկարությամբ, 4 մենաքար բացահանքից և մաքրվածքներից, ինչպես նաև 2 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների ու 2 նմուշ քիմիական կազմը որոշելու համար:

Վերցված նմուշները կենթարկվեն համապատասխան փորձարկումների, լիցենզավորում ունեցող ընկերության լաբորատորիայում:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ բույսերի կարմիր գրքում և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, բնության հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.



- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում, որին տրվում է համապատասխան թեքություն՝ թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը ապահովելու նպատակով,

- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,

- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղի ջարդոն,

- կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր,

- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,

- փոշենստման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում՝ տարվա չոր և շոգ եղանակներին, յուրաքանչյուր օր, տեխնիկան ջուրը նախատեսվում է բերել պայմանագրային հիմունքներով բերովի կցիչ ցիստեռնով,

- աշխատանքների կատարման տեղամասերի ցանկապատում, մեկուսացում,

- խախտված տարածքների ռեկուլտիվացիա,

Ագրակի տուֆերի երևակման տեղամասում ընկերությունը երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտվող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուրը շաբաթը մեկ անգամ:

- Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի, մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումները՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, աղտոտիչ նյութերով արտադրական հրապարակի հողերի հնարավոր աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Հողաբուսաշերտի հզորությունը կազմում է 0.1-0.2մ:

Նախատեսվում է փորձնական հանույթի, հորատման հրապարակների, լեռնային փորվածքների ժամանակ հանել փուխր ապարները, պահեստավորել հատուկ նախատեսված վայրերում, իսկ աշխատանքների ավարտից հետո կատարել ռեկուլտիվացիա և լանդշաֆտի վերականգնում:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընդհանուր ծավալը կկազմի 42.6խմ, որի իրականացման համար նախատեսված է 63900 դրամ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թողնելու նորմայի սահմաններում է:



Ագարակական համայնքում Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրակազմման, հաշվի է առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

### Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով՝ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ագրա>> ՍՊԸ կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Ագրակի տուֆերի երևակման տեղամասում 2019թ. ընթացքում կատարվելիք օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Ս. Մեսրոպյան